ԿԱՐԾԻՔ

Ը.00.08 «ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՈՌ ԱՐԱՅԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍՏՐԱՏԵԳԻԱՆԵՐ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պետական պարտքի կառավարումը գտնվում է երկրի տնտեսական քաղաքականության առանցքում, ուստի պետական պարտքի արդյունավետ կառավարման քաղաքականության մշակման անհրաժեշտությունը հանդիսանում է տնտեսական քաղաքականության առաջնահերթություններից: Պարտքի արդյունավետ կառավարման անհրաժեշտությունը բխում է պարտքի սպասարկման կայունության ապահովման հրամայականով, ինչպես նաև կայուն մակրոտնտեսական միջավայրի ձևավորման և երկարաժակետ հատվածում տնտեսական զարգացման տեսանկյունից պետական պարտքի էֆեկտիվ կառավարման քաղաքականությանը վերապահված էական դերակատարմամբ:

Ինչպես ցանկացած զարգացող տնտեսության համար, այնպես էլ Հայաստանի համար պետական պարտքի կառավարման քաղաքականության արդյունավետության բարձրացումն ունի խիստ կարևորություն: Պարտքի արդյունավետ կառավարման կարևորությունը առանձնակիորեն ընդգծվում է 2008 թվականից ի վեր Հայաստանի պետական պարտքի ցուցանիշի աճի միտման համատեքստում: Մասնավորապես, եթե 2008 թվականին պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 16.4 տոկոս, ապա 2019 թվականի տարվա վերջի դրությամբ այն կազմել է 53.5 տոկոս:

Վերոգրյալից բխում է գիտական հենքի հիման վրա պետական պարտքի արդյունավետ կառավարման ստրատեգիաների մշակման, ինչպես նաև դրանց

կիրառման անհրաժեշտությունը, որով էլ հիմնավորվում է ատենախոսության թեմայի արիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական նպատակն է հանդիսանում պետական պարտքի կառավարման քաղաքականության արդյունավետության բարձրացման նկատառումով գիտական հենքի հիման վրա պետական պարտքի կառավարման ստրատեգիաների մշակումը:

Հետազոտության հիմնական նպատակի իրագործման համար ատենախոսի կողմից սահմանվել են հետևյալ խնդիրները.

- սահմանել հասարակ արժեկտրոնային պարտատոմսի և մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսի մինչև մարում եկամտաբերությունների միջև կապը՝ սփոթ կորի տարբեր տեսքերի և պարտատոմսերի պարամետրերի հավասարության ենթադրության պայմաններում,
- պարտատոմսերի պարամետրերի հավասարության և համահարթ սփոթ կորի ենթադրության ներքո ներկայացնել հասարակ արժեկտրոնային պարտատոմսի և մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսի գների միջև ֆունկցիոնալ կապը,
- որոշակի ենթադրությունների պայմաններում սահմանել հասարակ արժեկտրոնային պարտատոմսի և մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսի Մաքոլիի դյուրացիաների միջև կապը,
- որոշակի ենթադրությունների պայմաններում սահմանել հասարակ արժեկտրոնային պարտատոմսի և մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսի ձևափոխված դյուրացիաների միջև կապը,
- ուսումնասիրել պարտքի կառավարման քաղաքականության արդյունավետության բարձրացման հնարավորությունը ազգային արժույթի արժեզրկման միջոցով արտահանման խթանման քաղաքականության կիրառմամբ: Այս նպատակով ՀՀ տնտեսության օրինակով գնահատել կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածներում իրական արդյունավետ փոխարժեքի, ինչպես նաև իրական արդյունավետ փոխարժեքի տատանողականության (ռիսկ) նկատմամբ

արտահանման էլաստիկության գործակիցները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսը սահմանել է գիտական նորույթ պարունակող արդյունքներ՝

- Նելսոն-Սիգելի մոդելի շրջանակներում սփոթ կորերի սիմուլյացիայի և թվային մեթոդների կիրառման միջոցով սահմանվում է հասարակ արժեկտրոնային պարտատոմսի և մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսի մինչև մարում եկամտաբերությունների միջև կապը: Ստացված արդյունքները վկայում են, որ աճող սփոթ կորի դեպքում հասարակ արժեկտրոնային պարտատոմսի մինչև մարում եկամտաբերությունը գերազանցում է մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսի մինչև մարում եկամտաբերությանը՝ պարտատոմսերի պարամետրերի (արժեկտրոնի դրույք և արժեկտրոնների քանակ) հավասար լինելու ենթադրության պայմաններում: Նվազող սփոթ կորի դեպքում արժեկտրոնային պարտատոմսի մինչև մարում եկամտաբերությունը զիջում է մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսի մինչև մարում եկամտաբերությանը:
- Որոշակի ենթադրությունների պայմանում ձևակերպվում և ապացուցվում է թեորեմ, ինչը սահմանում է հասարակ արժեկտրոնային պարտատոմսի և մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսի գների միջև ֆունկցիոնալ կապը:
- Որոշակի ենթադրությունների պայմանում ձևակերպվում և ապացուցվում են թեորեմներ, համաձայն որոնց սահմանվում են հասարակ արժեկտրոնային և մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի դյուրացիաների միջև կապը՝ համահարթ սփոթ կորի ենթադրության և պարտատոմսերի պարամետրերի (արժեկտրոնի դրույք և արժեկտրոնների քանակ) հավասարության ենթադրության դեպքում: Համաձայն թեորեմների՝ հասարակ արժեկտրոնային պարտատոմսի դյուրացիաները (Մաքոլիի և ձևափոխված դյուրացիաներ) գերազանցում են մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսի դյուրացիաներին:
- Պարտքի կառավարման արդյունավետության բարձրացման համատեքստում արտահանման խթանմանը վերապահված առանցքային դերակատարման համատեքստում Հայաստանի տնտեսության օրինակով գնահատվում են

արտահանման հավասարման մի քանի սպեցիֆիկացիաներ: Գնահատման արդյունքները վկայում են, որ իրական արդյունավետ փոխարժեքի աստիճանական արժեզրկման միջոցով արտահանման խթանման քաղաքականության իմպլեմենտացման միջոցով հնարավոր է հասնել պետական պարտքի կառավարման և սպասարկման արդյունավետության բարձրացմանը:

Ատենախոսի կողմից ստացված գիտական արդյունքների հիման վրա առաջադրվում են պետական պարտքի կառավարման քաղաքականության արդյունավետության բարձրացման ռազմավարություններ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության առաջին գլխում ատենախոսը նախ փորձել է ամփոփ ներկայացնել պետական պարտքի կառավարման ստրատեգիաների մշակման համար կառուցված դինամիկ ստոխաստիկ մոդելները, որոնք լայն կիրառելիություն ունեն տարբեր զարգացած երկրների կենտրոնական բանկերի և պարտքի կառավարման գործակալությունների կողմից:

Ատենախոսության երկրորդ գլխում ատենախոսը պարտքի կառավարման ստրատեգիայի մշակման նպատակով իրականացնում է համեմատական վերլուծություն երկու տիպի ֆիքսված եկամտով արժեթղթերի՝ հասարակ արժեկտրոնային պարտատոմսի և մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսի բնութագիրչների միջև: Մասնավոապես, սահմանվում է հասարակ արժեկտրոնային պարտատոմսի և մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսի մինչև մարում եկամտաբերությունների միջև կապը, գների միջև ֆունկցիոնալ կապը, ինչպես նաև դյուրացիաների (Մաքոլիի և ձևափոխված դյուարցիաներ) միջև կապը:

Ատենախոսության երրորդ գլուխը նվիրված է պարտքի կառավարման քաղաքականության բարձրացման նկատառումով այլընտրանքային ստրատեգիայի մշակմանը: Ստարտեգիան հենված է պարտքի արդյունավետ կառավարման

համատեքստում արտահանման խթանմանը վերապահված առանձնակի նշանակություն ունեցող դերակատարման վրա:

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում շարադրված են հետազոտական աշխատանքի արդյունքում ստացված հիմնական արդյունքներն և առաջարկությունները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսության վերաբերյալ կարելի է շեշտել որոշ դիտողություններ՝

1. Աշխատանքում ներառված են առավելապես մաթեմատիկական բնույթի հետազոտություններ, որոնք իհարկե հանգեցրել են տնտեսագիտական եզրահանգումների, սակայն ըստ էության աշխատանքը կշահեր եթե տնտեսագիտական եզրահանգումները առավել խորությամբ ընգծվեին:
2. Հետազոտության առաջին գլուխը նվիրված է Կանադայում, Մեծ Բրիտանիայում, Շվեդիայում և Դանիայում մշակված ստոխաստիկ սիմուլյացիոն մոդելներին: Այդ գլուխը նկարագրողական է և չի ավարտվում որևէ եզրահանգումներով: Կարծում ենք, որ հետազոտության արժեքը կբարձրանար, եթե աշխատանքում տեղ գտներ նաև հետազոտվող խնդրի տնտեսագիտական փորձը, որը առավել կբաևձրացներ հետազոտության կիրառական արժեքը:
3. Հեղինակի առաջարկված առաջին ռազմավարությունները իհարկե կարևոր է պետական պարտքի կառավարման առումով, սակայն հարց է առաջանում այդ ռազմավարության հետ կապված. արդյոք մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսեր չեն թողարկվել, և ինչ է ցույց տալիս մեր և իհարկե այլ երկրների իրական փորձը այդ առումով: Չէ որ մաթեմատիկական սիմուլյացիաները կարող են չհամընկնել իրողությունների հետ, քանի որ այդ համակարգի վրա կարող են լինել բազմաթիվ իրական ազդեցություններ, որոնք չեն կարող ենթարկվել մաթեմատիկական մոդելավորման և կարող են այլ պատկեր ցույց տալ:
4. Երկրորդ ռազմավարությունը, որի շուրջ պերմամնենտ քննարկումներ են գնում, բավական հետաքրքիր է, սակայն ազգային արժույթի արժեզրկման գործընթացը ըստ էության չի մոդելավորվել: Բաց է մնում նախ և առաջ այն հարցը

թե ինչքան, այսինքն պետք է բացահայտվի արժեզրկման նորման, արդյոք ինչքան շատ այնքան լավ: Այդ հարցի պատասխանը տրված չէ: Կան այս դրույթի հակառակորդներ, իսկ միգուցէ ազգային արժույթի արժեվորումը տնտեսագիտորեն առավել հիմնավորված է, չէ որ ի վերջո արժեզրկումը կարելի է նշել համազոր է աղքատացմանը: Վերոնշյալը փաստում է, որ նմանատիպ խնդիրը պետք է նաև տնտեսագիտական բացատրություն ունենա և լուծվի համակարգային մոտեցման սկզբունքով:

5. Աշխատանքում գործնական գնահատումները, սիմուլյացիաները և հաշվարկներն իրականացվել են վիճակագրական փաթեթների միջավայրում գրված ծրագրերի միջոցով: Աշխատանքում նկարագրված են համապատասխան ալգորիթմները և հաշվարկների տրամաբանությունը: Աշխատանքը կշահեր, եթե ատենախոսության մեջ ներկայացվեին նաև մշակված կոդերը, որոնք կարող են դիտվել որպես հետազոտության կիրառական արդյունք:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերոնշյալ դիտողությունները առավելապես կրում են խորհրդատվական բնույթ չեն նսեմացնում հետազոտոթյան գիտագործնական արդյունքները: Գոռ Արայիկի Խաչատրյանի ատենախոսությունը ինքնուրույն, արժեքավոր և ամբողջական հետազոտություն է:

Հետազոտության հիմնական արդյունքներն ունեն գիտագործնական բնույթ: և կարող են օգտագործվել ՀՀ պետական պարտքի կառավարաման քաղաքականության մշակման նպատակով: Ատենախոսության արդյունքները կարող են կիրառվել նաև պարտատոմսերից կազմված պորտֆելների կառուցման, ինչպես նաև դրանց ռիսկերի կառավարման նկատառումներով:

Ատենախոսության հիմնական արդյունքները տպագրված են երեք գիտական հոդվածներում, որոնցից երկուսը Scopus-ի շտեմարանում ներառված գիտական ամսագրերում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի հիմնական դրույթներն ու արդյունքները:

Գոռ Արայիկի Խաչատրյանի «Պետական պարտքի կառավարման ստրատեգիաներ (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.08 «Մաթեմատիկական տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԻՄԱԽՈՍ՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Վ. Ա. Սարգսյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՊՄՀ գիտական քարտուղար՝

22.09.2020